Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1418

3 KG
L-29

dzh
1904

ЗКՑ
L-29

Paul Lafargue. — Simples Verités Socialistes.

ՊՐՕԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ՝ ՄԻԱՆԱՆՔ

ՊՕԼ�simՔ ԼԱՖԱՐԳ

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՐԶ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարգմանութիւն Ֆրանսերէնից

ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ՊՈՍԹՈՆԻ
19 03
ARMENIAN NAT. LIBRARY OF BOSTON.

Հրատարակութիւն
ՍԵՑ.-ՊԵՄ. ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

12.001

ԺԸՆԷՎ
Կազմակերպութեան Տպարան. Rue Blanche, 3.
1904

ЗКՑ

2010

56641-ակ

2133-70

ՏԷՐԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՆԵՒՈՐՆԵՐԻ ՄԱՐԿՈՒԹԻՒՆԸ

—

— Գործարանի ընկեր, մեզ հաւատացնում են, թէ 89 թ. Յեղափոխութիւնից և Մարդու Իրաւունքների*) յայտարարումից ի վեր, բոլոր մարդիկ ազատ են։ Արդեօք դու ազատ ես։

— Ես, ես հաւատացած եմ, որ ազատ եմ։

— Տեսնենք. ո՞վ է քեզ տալիս աշխատելու իրաւունքը։

— Տէրը։

— Ո՞վ է սահմանում քո աշխատանքի օրը։

— Տէրը։

---

*) 1789 թուականից առաջ Ֆրանսիայի կառավարութիւնը միապետական էր. պետութեան ամբողջ դէկը գրտնւում էր ազնուականների ձեռքում։ Ազնուականներն ունէին խոշոր հողային սեփականութիւններ և իրենց ծանր հարկերով ճնշում, արնաքամ էին անում գիւղացիներին, որոնք ագիտութեան և աղքատութեան մէջ հեծում էին։ Ազնուականութեան կողքին, Ֆրանսիայում գոյութիւն ունէր մի ուրիշ ուժեղ դասակարգ. սա նոյնպէս կառավարութեան մէջ դեր չէր կատարում, թէև երկրի տնտեսական կեանքում խոշոր դեր էր կատարում։ Նրա ձեռ-

— Ո՞վ է սահմանում քո օրավարձը։

— Տէրը։

— Ո՞վ է վաճառում քո աշխատանքի արդիւնքը և դրպանը դնում շահը։

— Տէրը։

— Ո՞վ է քեզ տալիս և կամ մերժում մէկ օրւայ հանդիստդ։

քում էր դրամը և արդիւնագործութիւնը։ Պետութեան կարգերը նրա համար ձեռնտու չէին, որովհետև նա չէր կարողանում օրէնքները նւիրել իւր կապիտալի, իւր արդիւնագործութեան ազատ զարգացման։ Զը կարողանալով աւելի հանդուրժել, որ իւր համար օրէնքներ հաստատեն թագաւորն ու ազնւականները, չը կարողանալով այլևս երկար տանել ազնւականութեան և միապետութեան լուծը, նա ոտքի կանգնեց և կռիւ յայտարարեց միապետութեան, ազնւականութեան, Ֆրանսիայի հնացած կարգերին։ Դա բուրժուազին էր, երրորդ դասակարգը։ Բայց նա մենակ չէր կարող յաղթել և իմանալով, որ իրեն պէտք է օգնեն մնացած թէ իրաւազուրկ և թէ աղքատ խաւերը, նա սկսեց քարոզել, թէ յեղափոխութիւնը սըրանց համար էլ փրկարար է, և սկսեց խոստումներ անել թշւառ աշխատաւորներին։ Գրեց իւր դրօշակի վրայ ազատութիւն ամենքի համար, յայտնեց առաջին անգամ, որ խեղճ, տգէտ, սովալլուկ բանւորները, պրոլետարներն և գիւղացիներն էլ մարդ են և իրաւունքներ ունեն, ինչպէս բոլոր մնացած մարդիկ։ Նա դրեց առաջին անգամ այս խօսքերը, մարդու և քաղաքացու իրաւունք-

— Տէրը։

— Այսպէս ուրեմն, չունենալ ոչ մի իրաւունք քո աշխատանքի արդիւնքի վրայ, ենթարկւել երեկոյից մինչև առաւօտ տիրոջ օրէնքին, անկարող լինել աշխատել, այսինքն անկարող լինել ուտել, թէ դու, թէ կինդ, թէ զաւակներդ առանց տիրոջ թոյլտւութեան, դու այդ անւանում ես ազա՞տ լինել։

ները, և ասաց, որ այս իրաւունքները պիտի կազմեն Ֆրանսիական ապագայ կառավարութեան հիմքը, եթէ ինքը յաղթէ. ուրեմն՝ թող օգնեն իրեն ամենքը, որոնք ոչ իրաւունք, ոչ ձայն, ոչ սեփականութիւն ունեն։ այդ ամենը նրանք ձեռք կը բերեն, երբ բուրժուազին կը յաղթէ։ Պարիզի պրոլետարները, գիւղական թշւառ մասսաները շատ տեղերում, արձագանք տւին բուրժուազիի կոչին. նրանք նոր ձայն լսեցին. թշւառ, տգէտ, անգիտակից՝ նրանք շտապեցին օգնել բուրժուազիին, ենթադրելով թէ ամեն բան պիտի փոխւի այն ժամանակ։ Եւ բուրժուազին յաղթեց։ Ա՛յ, որ թափեց իւր արիւնը՝ եղաւ թշւառ պրոլետարիատը, որ բոլոր ցոյցերի, բոլոր ապըստամբութիւնների մէջ եղաւ առաջինը. նա իւր արիւնով շատ անգամ ներկեց Պարիզի անկիւնները։ Սակայն մինչև այժմ չը տեսաւ այն խոստումների իրագործումը, որ իրեն արել էին 1789-ին։ Մարդու իրաւունքները ծակ խօսքեր եղան միայն, որ բուրժուազին հնչեցրեց՝ բանւորներին իւր ետևից քաշելու և դժւար վայրկեանում իւր կռիւների ճակատին դնելու միապետութեան զօրքերի դիմաց։

Ծան. թարգմ.

Գեղեցիկ ազատութիւն, որ քեզ համար թխեցին 89-ի Յեղափոխութիւնը և Մարդու Իրաւունքները։ Շարունակենք։ Ո՞ւմ է տուած ազատութիւն հարբեցնել՝ աշխատեցնելով բանուորին, նրա կնոջ և երեխաներին։

— Տիրոջ։

— Ո՞ւմ է տուած ազատութիւն տալ բանուորին, նրա կնոջն ու երեխաներին այն գործը, որն իրեն աւելի շահ է բերում։

— Տիրոջ։

— Ո՞ւմ են աւել ազատութիւն դուրս ձգել այն բանուորին, որն այլևս պէտք չէ նրան։

— Տիրոջ։

— Ո՞ւմ են աւել ազատութիւն փողոց ձգելով սովամահ անել ծեր բանուորներին, որոնք իրանց երիտասարդական և առնական հասակի մէջ նրան հարստացրել են։

— Տիրոջ։

— Ո՞ւմ է տուած ազատութիւն՝ քաղցի ենթարկել բանուորներին գործադուլի միջոցով, որոնք պահանջում են քիչ աւելի օրավարձ և քիչ պակաս աշխատանք։

— Տիրոջ։

— Ո՞վ է նա, որ ազատ է իւր համար ծառայեցնել ոստիկաններին, զինուորներին և դատաւորներին՝ յաղ-

թահարելու համար գործադուլ անողներին, որոնց ինքը վռնտել է իւր գործարաններից։

— Տէրը։

— Ինչպէս, 89-ի Յեղափոխութիւնն ու Մարդու Իրաւունքները տուել են ամեն ազատութիւն տիրոջը իսկ ստրկութիւնը՝ բանուորին։

II.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ԲԱՆՏԻՑ ԷԼ ՎԱՏ Է

Հանքահան. — Հէնց նոր ազատեցին Ռոմբառի կնոջը, տասն և եօթ տարուայ բանտարկութիւնից յետոյ. այս պատիժը, ասենք, իզուր չէր, բայց և անպէս ծանր է բանտարկուած լինել առաւօտից մինչև երեկոյ, այդքա՜ն տարիների ընթացքում։

Սոցիալիստ. — Իսկապէս որ այդ սոսկալի է։ Բայց քո սեփական գոյութիւնն արդեօք աւելի հաճելի՞ է եղել։

Հան. — Կատա՞ղ ես անում։

Սոց. — Ո՞ր ժամին ես դու վերկենում։

Հան. — Հրագով, արևի ծագումից շատ առաջ, և նա մայր մտած է լինում, երբ ես բարձրանում եմ փոսից։

Սոց. — Դու անց ես կացնում, ուրեմն, քո օրը գետնի տակ, իբրև մի խլուրդ, այնպէս որ արև չես տեսնում։

Հան. — Ինչպէս չէ, կիրակիները և անգործութեան օրերը, բայց այդ պարագային տանը հաց չէ լինում, և մէկ պատառի փոխարէն ես կը տայի արևն և կ'ինչեի գեռնափորը:

Աց. — Բանտարկեալը պէտք չունի տալ իր արևը հացի փոխարէն, նրա հացը կայ ու կայ, աշխատէ թէ անգործ լինի: Դու դիտե՞ս որ նրա օրը աւելի կարճ է, քանթէ քոնը: Նա վեր է կենում աւելի ուշ և պառկում է աւելի վաղ, նա հանքի ու գործարանի ընկերներէ նման երկիւղ չունի հանքի կապերի պայթումից, ոչ մեքենաների ատամնանիւների հիւսուածքից և ոչ անուափոկերի հարուածներից: Աշխարհ հացագործին — անկասկած միակ հոգը չէ՞ որ քեզ նեղացնում է:

Հան. — Ցան քրտի կայ, սա կայ, նա...

Աց. — Բանտարկեալը ձրի է բնակւում, անշուշտ աւելի լաւ քան դու և քո ընտանիքը: Նա հոգ չունի, Պետութիւնն ամէն բան իր վրայ է առնում — բնակարան, ուտելիք, հագուստ, լուացք, վառելիք... Ո՞ւրեան ես յետ գցել:

Հան. — Պարտքեր, երևի ուզում ես ասել: Մենք պարտական ենք հացագործին, նպաստավաճառին մեր շաբաթականը առաջ քան ստանում ենք: Երբ դեռ նոր էի ամուսնացած, կարողանում էի մի քանի սու միայն յետ գցել: Բայց երեխաների աշխարհ գալուց ի վեր, դժբախտութիւն, ոչինչ չէ մնում: Ահա տասն և ութ տարի է, որ ես հանքերի մէջ եմ, երկու անգրանիկներս աշխատում են, և մենք մէկ սու անգամ չունենք խնայողական գանձարանի մէջ, հէնց վաղը, եթէ ես հիւանդանայի, պէտք կը լինէր մուրալ: Մեզ ասում են խնայողութիւն արէք: Ի՞նչից անտեսեմ, յետ գցեմ, երբ հազիւ բաւականաչափ ուտելու հաց ունենք:

Աց. — Ռոմբառի կինը անտեսել էր 1.250 ֆրանկ*), որ նրան վերադարձրին բանտից ելնելուց յետոյ:

Հան. — Բայց այդ դիպուածում աւելի լաւ է՝ երթալ բանտ, քանթէ հանքն ու գործարան:

Աց. — Դու ասացէր:

Հան. — Բայց այդ տեսակ բանն ի՞նչպէս կարող է գոյութիւն ունենալ:

Աց. — Բանտարկեալների կեանքը ծանր է. նրանց դնում են զնդանի մէջ իբրև գազաններ, բայց բանտորի կեանքը աւելի վատ է: Պառավարութիւնը բանտարկում է ոճրագործներին, որպէսզի պաշտպանէ և ապահովէ բուրժուաներին. բայց նա չէ ուզում շահագործել նրանց աշխատանքը. ու-

*) Ֆրանսիական դրամ: մի ֆրանկն հաւասար է 20 սուի կամ 100 սանտիմի, իսկ ռուսական փողով մօտաւորապէս 38 կոպէկի: Թարգմ.

ռեմն շահ չունի նրանց դառցնել աւելի թշուառ քան թէ են նրանք։ Բայց տիրոջ բանն ուրիշ է, — նա շահ ունի մեզ աւելի ու աւելի թշուառացնելու. ամեն մի ժամը, որ նա բարդում է մեր օրվայ վրայ և ամեն մի սուն, որ նա քաշում է մեր վարձից, հարիւր հարիւր սուեր են որ թափում են նրա գրպանը։ Եւ որքան աւելի թշուառ ենք մենք, այնքան աւելի ստիպուած ենք էժան ծախել մեր աշխատանքը։ Բանուորների թշուառութիւնը ստեղծում է կապիտալիստների համար հարստութիւն։

III.

ԻՆՉԻ Ի ՊԻՏՔ ՑԻՐԸ

—

Բանուոր. — Բայց եթէ էլ տէր չը լինէր, ո՞վ աշխատանք կը տար։

Սոցիալիստ. — Բանուոր ընկերները շատ անգամ են տուել ինձ այդ հարցը. կուզե՞ս միասին քննենք այդ։ Աշխատելու համար հարկաւոր են՝ գործարան, մեքենաներ և հում նիւթ։

Բան. — Այո, այդպէս է։

Սոց. — Ո՞վ է կառուցել գործարանը։

Բան. — Որմնադիրները։

Սոց. — Ո՞վ է շինել մեքենաները։

Բան. — Մեքենագործները։

Սոց. — Ո՞վ է բուսցրել բամբակը, որ դու հիւ-

սում ես. ո՞վ է խուզել բուրդը, որ քո կինը մանում է. ո՞վ է հանել հանքից երկաթը, որ որդիդ ծեծում է։

Բան. — Երկրագործները, հովիւները, հանքահանները — ամենքն էլ ինձ պէս բանուորներ։

Սոց. — Ուրեմն դու էլ, կինդ էլ, որդիդ էլ դուք ամենքդ էլ կարող էք աշխատել միայն շնորհիւ այն հանգամանքի, որ այդ զանազան բանուորները ձեզ մատակարարել են գործարան, մեքենայ և հում նիւթ։

Բան. — Այդ ճիշտ է հօ ճիշտ. որ բամբակ ու ոստայն չը լինի, չեմ կարող կալենկոր հիւսել։

Սոց. — Ուրեմն, տէրը չէ, որ քեզ աշխատանք է տալիս, այլ որմնադիրը, մեքենագործը, երկրագործը։ Գիտե՞ս թէ քո տէրն ինչպէս է ձեռք բերել այն ամենը, ինչ որ քեզ պէտք է աշխատելու համար։

Բան. — Գնել է։

Սոց. — Ո՞վ է նրան փող տուել։

Բան. — Չը գիտեմ. հօրից մի քիչ մնացել էր, իսկ այժմ նա միլիոնատէր է։

Սոց. — Ի՞նչպէս է վաստակել նա այդ միլիոնը. մեքենաներ բան գցելով, կամ բամբակ հիւսելով։

Բան. — Յիմար է եղել ի՞նչ է. մեզ աշխատեցնելով է, որ նա դիզել է իւր միլիոնը։

Սօց. — Ես հարստանում է, հետևապէս, ոչինչ չանելով։ Այդ միակ միջոցն է հարստութիւն շինելու համար։ Նրանք, որոնք աշխատում են՝ հազիւ վաստակում են այնքան, որ սովից չը մեռնեն։ Բայց ասա, խնդրեմ, եթէ դու և քո արհեստանոցի ընկերները չ՝աշխատէիք, մի՞թէ քո տիրոջ մեքենաները չէին ժանգոտի, մի՞թէ նրա բամբակը մժեղները չէին ուտի։

Բան. — Օհ՜, գործարանում քար քարի վրայ չէր մնայ, եթէ մենք չ՝աշխատէինք։

Սօց. — Հէռաւարար, աշխատելով՝ դու պահպանում ես մեքենաները և հում նիւթը, որ քո աշխատանքի համար անհրաժեշտ են։

Բան. — Ճիշտ է այդ, բոլորովին գլուխս չէ եկել այդ միտքը։

Սօց. — Մի՞թէ քո տէրը զբաղւում է այն բանով, թէ ինչ է կատարւում իւր գործարանում։

Բան։ — Ը՞ստ էլ հոգը չէ. ամեն օր նա անում է իւր փոքրիկ պտոյտը, օրպէսզի մեզ տեսնի աշխատելիս, բայց ձեռքերը միշտ դրած գրպանում չը լինի թէ կեղտուեն։ Գիլատուրի մէջ, որտեղ աշխատում են կինս և աղջիկս, տէր չեն տեսնում, թէև չորս տէր կայ։ Իսկ ինչ վերաբերում է մեստաղագործական արհեստանոցին, — տղաս այնտեղ բանւոր է, — այնտեղ տիրոջ երես անգամ չեն տես-

նում։ Նրանց հետքն անգամ չէ կարելի տեսնել։ արհեստանոցի տերը մի անանուն ընկերութիւն է։ Խօսքի համար, եթէ դու և ես ունենայինք 5 հարիւր ֆրանկ սնդուկում, մենք կարող էինք դնել մի բաժնեթուղթ (ակցիա) և դառնալ տէրերից մէկը, առանց երբ և իցէ գործարանում ոտ դնելու։

Սօց. — Ապա ո՞վ է կառավարում և հսկում աշխատանքն այն գործարանում, որի տէրերն ակցիոներներ են։ Դո ասած Գիլատուրում, որ չորս ընկերակից տէր ունի և ոստայնագործական արհեստանոցում, ուր միայն մի տէր կայ։ Հարցնում եմ՝ ո՞վ է կառավարիչն ու հսկողը, եթէ տէրերն այնտեղ երբէք չեն լինում, կամ այնքան սակաւ, որ չ՝արժէ հաշուել անգամ։

Բան. — Կառավարիչները և վերակացուները։

Սօց. — Բայց եթէ բանւորներն են, որ գործարան են կառուցել շինել մեքենաներ և արտադրել հում նիւթեր, իսկ կառավարիչներն ու վերակացուները կանոնաւորում են աշխատանքը, ապա էլ ինչացո՞ւ են տէրերը։

Բան.— Ոչինչ։

Սօց. — Եթէ դէպի լուսինը տանող ճանապարհ լինէր, կարելի էր ուղարկել տէրերին այնտեղ, բայց անպատճառ, որ էլ յետ չը դառնան, և այն ժամանակ քո ոստայնագործութիւնն էլ քո կնոջ ֆի-

լատուրն էլ, որդուդ մետաղագործական արհեստանոցն էլ կը շարունակէին հիւսել, մանել և երկաթը ծեծել առաջուայ նման։ Դիտենս տարեկան ինչքան շահ է ստանում քո տէրը։

Ռան. — Մէր հաշուով նա պիտի աշխատէ 100 հազար ֆրանկ։

Սոց. — Ռանի բանւորներ է նա աշխատեցնում՝ տղամարդ, կին, երեխայ միասին առած։

Ռան. — Մի հարիւր։

Սոց. — Ի՞նչ քան աշխատավարձ է տալիս նա ձեզ։

Ռան. — Մէկը միւսի վրայ տարեկան 1000 ֆրանկ իւրաքանչիւրին, վերակացուների և կառավարիչների թոշակն էլ հաշուած։

Սոց. — Դուրս է գալիս, ուրեմն, որ գործարանի 100 բանւորներն ստացել են հարիւր հազար ֆրանկ աշխատավարձ, այսինքն ճիշտ այնքան, որ սովից չը մեռնեն, մինչդեռ քո տէրն իւրացրել է հարիւր հազար ֆրանկ նրա համար, որ ոչինչ չէ արել։ Այս երկու հարիւր հազար ֆրանկը ո՞րտեղից դուրս եկան։

Ռան. — Երկնքից չէն եկել, յամենայն դէպս. ես չեմ տեսել, որ երկնքից «պլէկ» թափուէր։

Սոց. — Այդ ուրեմն, գործարանի բանւորներն են, որ արտադրել են հարիւր հազար ֆրանկ՝ իրենց ստացած վարձը, և բացի այդ՝ հարիւր հազար

էլ շահ, տիրոջ համար, որն այդ փողի մի մասը ծախսել է նոր մեքենաներ գնելու։

Ռան. — Ճիշտ է, անվիճելի է ասածդ։

Սոց. — Ուրեմն բանւորներն են փող արտադրողը. իսկ տէրը նշանակում է այդ փողը մեքենաներ գնելու համար, որ և աշխատեցնում է. վերակացուներն ու կառավարիչներն են՝ քեզ նման վարձկաններ, որ կառավարում են արտադրութիւնը։ Այդ էլ ինչի՞ է պէտք տէրը։

Ռան. — Աշխատանքը շահագործելու։

Սոց. — Աւելի լաւ է ասա՝ գողանալու աշխատաւորից. այդ աւելի ուղիղ է և աւելի պարզ։

IV.

ԹԻ ԻՆՉՔԱՆ ԵՍ ՆՈՏՈՒՄ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ

Ռան. — Դեղ հետ միասին ես էլ հաւատացած եմ, որ խոշոր արդիւնագործութեան տէրը, որ իրեն փոխարէն գնում է բանւորներ, վերակացուներ և կառավարիչներ, կարելի է բոլորովին վերացնել, առանց որևէ վնաս ունենալու, նոյնիսկ մեծ օգուտ կը լինի։

Սոց. — Եկատիր, խնդրեմ, որ ինքը տէրը իւր յուժար կամքով վերացրել է իրեն. մեզ մնում է միայն վերացնել նրան բարիքների բաշխումի մէջ, բարիքներ, որոնց մեծ մասը նա է իւրացնում։

Ռան. — Լաւ. բայց չեմ հասկանում կարգին, թէ ինչ օգուտ կը տայ այդ բանը մեզ. մենք դարձեալ պիտի աշխատենք ապրելու համար։

Սոց. — Միայն կապիտալիստներն են որ յաջողել են ապրել՝ առանց աշխատելու։ Հաշուենք տեսնենք ինչքան են նստում կապիտալիստները։ Ընտաստիկ. — դու մեքենագործ ես. մի՞թէ քո կարծիքով մեքենոյն է՝ ածուխն այրել մի վառարանում՝ շոգէկաթսայի տակ թէ արհեստանոցի բակում՝ ազատ օդի մէջ։

Ռան. — Ա՜հ, իհարկէ ոչ. շոգեկաթսայի տակ վառուող ածուխը առաջացնում է շարժող ոյժ, որի շնորհիւ բանում է ամբողջ արհեստանոցը. եթէ բակում այրւի ածուխը՝ "մոլ է տալու,, ու օդն է ապականելու։

Սոց. — Գիտեմ որ մենք էլ մեքենաներ ենք և որ մեր կերած հացն ու միսը մեր ածուխն է, արտադրողի կերածը նրան ոյժ է տալիս, իսկ այդ ոյժը նա ծախսում է աշխատանքի մէջ. աշխատելով՝ նա նորից արտադրում է իւր կերած խմածի արժէքը և մի քիչ էլ աւելի, այս աւելին գողանում է տէրը։ Կապիտալիստը ոչինչ չէ անում. ուրեմն նա այրում է զուր տեղը իւր կերածը՝ նրման այն ածուխին, որ այրւում է ազատ օդում։

Ռան. — Այդ ասածդ էլ ճիշտ է. կապիտալիստներն աւելորդ ու անօգուտ բերաններ են, որ

բանւորները պահպանում են զուր տեղը։ Բայց եթէ մեր պարենի վրայ աւելացնեն նրանց կերածն էլ, մենք էլի այն ենք, էլի այն։

Սոց. — Համակարծիք եմ քեզ հետ, մանաւանդ որ՝ մի կապիտալիստի վրայ գալիս են հարիւրաւոր, հազարաւոր բանւորներ։ Բայց հարցին մօտենանք մի այլ կողմից. մի՞թէ քեզ չեն ասել թէ՝ ծուլութիւնը չարիքների մայրն է։

Ռան. — Տո՜նդ չը քանդւի։ Հէնց այդ երդը չէ՞, որ շարունակ երգել են իմ ականջում այն օրից ի վեր, երբ աչք եմ բաց արել. — դպրոցում, կրօնի դասին, արհեստանոցում, վերջապէս ամեն տեղ, ամեն տեղ։ Զարմանալին այն է, որ կապիտալիստներն ու տէրտէրները, որ այս խրատն անդադար կրկնում են, աւելի ծոյլ են, քան սատկած էշը։

Սոց. — Բանիդ կաց, նրանք անխելք չեն. որ լաւ նայես՝ կը տեսնես, որ կապիտալիստների վարքին այդ խրատը շատ սազ է գալիս։ Նրանք ուտում ու նստում են, ոչինչ չեն անում. այսպիսով նրանց մէջ զարգանում են հազարաւոր ախտ, չարիք, որոնց հոտն անգամ չեն առել բանւորները։ Այդ ախտերն ու չարիքները թունաւորում են հասարակութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս անօգուտ կերպով այրւող ածուխն ապականում է օդը։

Ռան. — Որ խօսքը ծուլութեան եկաւ, կապի-

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ս. ԱՄ. Ա. Մասեր...
ՄԱՍՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2133-70.

տալիստներն ում ասես չոռ կասեն։ Նրանք ու իրենց տիկիններն, որդիներն ու աղջիկներն այնպիսի ծոյլերն են, որ բանուորները երևակայել անգամ չեն կարող։ Նրանք ամենևին չեն ուզում աշխատել։ Իրենց ուտելիքն ու խմելիքն անգամ իրենց ձեռքով անել չեն ցանկանում։ Մի աշխարհ ծառաներ են պահում, որպէսզի կոշիկ մոմեն, շոր սրբեն, բնակարանն աւլեն ու լաւը պատրաստեն։ Դեռ ինձ ասել են ու հաւատացրել թէ տիկիններն ունեն աղախիններ, որոնցից մէկը սանրում է նրանց, երկրորդը նրանց կոստան է կապում, միւսը գուլպաներն ադանում, ուրիշ մէկը բաղնիք տանում տիկնոջ, լուանում, սրբում։...

Սոց. — Ո՞վ է կերակրում այդ ծառաներին, որոնք աշխատում են անդադար տէրերին ծառայելու համար։

Բան. — Նրանց տէրերը, ի՞նչ խօսք։

Սոց. — Բայց ո՞վ է արտադրել այն փողը, որ տէրերը ծախսում են ծառաների ուտելիքի ու ռոճկի համար։

Բան. — Հասկանալի բան է, որ այդ փողն արտադրողը տէրերը չեն. Նրանք աշխատանքից աւելի են վախենում, քան կրակից։

Սոց. — Ուրեմն բանուորներն են արտադրել այդ փողը, իսկ տէրերը լայն ու բոլ ծախսում են՝ աղախիններ, ծառաներ, կառապաններ, ձիեր պահելու համար։

Յամենայն դէպս այդ անթիւ ծառայողներին պահպանելու միջոցները վարձաւոր դասակարգի մէջքից է դուրս գալիս։

Բան. — Դրէ՛ հէ չեն պահում, անիծածները։

Սոց. — Դրէ՛ պահածով բաւականայի՞ն.... Կապիտալիստների ժամանակը հոլով ձորով է։ Պարապ, ժամանակն սպանելու համար չէ կարելի յօրանջել ու չրթմա զարնել։ դրա համար պէտք է զարձանալ։ յետոյ, հօ զրկանքների մէջ տալրելու համար չէ (այդպէս տալրելը վիճակւած է միայն բանուորներին), որ ուրիշներին շահագործել ու հարբստացել են, այլ ամեն տեսակ՝ կարելի և երևակայելի զարձութիւններ ճաշակելու համար։ Դրէ՛ զրկանքների մատնւած լինելով, կարելի է մենակ լինել, կապիտալիստները՝ զարձանալու համար պէտք է ունենան կուրտիզաններ, երգիչներ, օպերային պարուհիներ, գրասէրներ, նկարիչներ, երաժիշտներ, կարմ՝ մի վոհմակ տղամարդ ու կին, որոնք իրենց կեանքը մաշում են, աշխատելով զարձացնելու յարգոյ պարոն տէրերին։ Յետոյ, մի մոռանար, որ այդ մարդիկն էլ պիտի ծառայողներ ունենան, որպէսզի իրենք օր ու գիշեր նիրեն կապիտալիստներին զարձութիւններ մատուցանելու համար։ Նորից բանուորներն են՝ այս անօգուտ բերանները լեցնողը։

Բան. — Պոռ ծառաներին կարելի է անօգուտ համարել, բայց արտիստները, գրողներն օգտակար են։

Սոց. — Ո՞ւմ համար. յամենայն դէպս՝ ոչ քեզ, ոչ էլ միւս ընկերների համար։ Դուք ժամանակ չ՝ունէք նրանց գրքերը կարդալու, ոչ էլ փող ունէք, որ գնաք լսէք նրանց դայլայլեկները և հիանաք նրանց գեղեցիկ պարերով. բայց չը նայելով դրան, էլի դուք էք նրանց պահպանողը։ Այն ամենը, ինչ որ ծախսում են կապիտալիստները, որպէսզի պահպանեն մարդիկ՝ իրենց զարձացնելու համար, թէ նիւթապէս և թէ հոգեպէս, այդ ամենը կորած բան է, ինչպէս որ կորած է նրանց կերածը։

Բան. — Տեսնում եմ թէ միտքդ ինչ է։ Ուզում ես ասել վերջ ի վերջոյ թէ այն անձերը, որ ծառայում են ու զարձացնում կապիտալիստներին, նրանց անձնական ծառաներն են և հետևապէս՝ անօգուտ բերաններ, ուզում են լինեն նրանք մի լաքէյ թէ Ֆիգարոյի*) քրօնիկոն գլոողները։ Բրանք ոչ մի ծառայութիւն չեն մատուցանում բանուորներին, որոնք սակայն նրանց կերակրում են. ապա ուրեմն նրանք մեզ համար ձրիակերներ են։ Կապիտալիստը մի ձրիակեր է, որի վրայ ապրում են ուրիշ ձրիակերներ։

*) Ֆրանսիական պահպանողական օրաթերթ։

Սոց. — Պարզ հաշիւ է։ Սակայն միայն անձնական ծառաները չեն ձրիակեր։ Հարուստների մոլորութիւնները շատ բարեյաջող պայման են ձրիակերներ բուծելու համար։ Գայեցէք քաղաքակիրթ մեծ քաղաքներին. այնտեղ վիտում են զանազան սալախանաներ, անառակութեան տներ պատհողներ, պնակալէզներ, սրիկաներ, դրանք ածում և բազմանում կապիտալիստների գեղեցիկ և արկածալցնդիր բարքերի մէջ։ Մէկ մէկ նրանք վտանգաւոր են դառնում նոյնիսկ կապիտալիստների համար, որովհետև փորձում են նրանց սեփականութիւնը կողոպտել կամ ձեռք են բարձրացնում նոյնիսկ նրանց անձնաւորութեան վրայ։ Իրենց պաշտպանելու համար կապիտալիստները պահում են դաղտնի ոստիկաններ, ժանտարմներ, դատաւորներ և բանտապետներ, որոնք մի այլ տեսակի ձրիակերներ են։

Բան. — Էլ ասում ես ինչ դառնայ։

Սոց. — Այդ դեռ քիչ է։ Միլիոններ է ծախսւում զօրք պահելու համար, որին "ազգային,, են ասում, որովհետև այդ զօրքը տալիս է պահպան շներ կապիտալիստական բարեկեցութեան և կարգերի համար։ Ո՞րտեղից են ստացւում այդ միլիոնները։

Բան. — Հարկերից։

Սոց. — Ո՞վ է վճարում հարկերը։

Բան. — Ամենքը, — կապիտալիստներն էլ, բանվորներն էլ...

Սոց. — Բայց կապիտալիստի ամեն մի կոպեկը արտադրել են վարձու բանվորները. ուրեմն զրքը պահելու համար ծախսած փողն էլ բանվորներն են վճարում: Հարուստներնք: Դու ասում ես թէ՝ կապիտալիստի կերածը կորած է:

Բան. — Այո՛, ինչպէս կորած է ապատ օդում այրող ածուխը:

Սոց. — Ճիշտ այդպէս էլ ի զուր վատնուած աշխատանք է այն աշխատանքը, որ կատարել են զանազան վիլլաներ շինելու, ինքնաշարժներ, զարդական նաւեր ու հիւսելու նրանց զգեստեղէնը և այլն:

Բան. — Ապա շուքի առարկաներ պատրաստելը. սա կորած աշխատանք է նոյնպէս: Յաւն այն է, որ այդ առարկաները պատրաստող բանվորները ամենից քիչ վարձ ստացողներն են: Ես ծնուել եմ ժապաւինագործների գիւղում. ճանաչում էի շատ շատ թշուառ կանանց, որոնց վարձը հազիւ հերիք էր անում օրուայ չոր հացը գնելու: Սակայն այդ խեղճերը կուրացրել են իրենց աչքերը տիկիններին համար ժապաւէն պատրաստելով, նրանց զարդարելու Ալանանի և Մալենի հատերով, որոնք համ անօգուտ են համ դժուար անելու բաներ:

Սոց. — Որքան աւելի են հարստանում կապիտա-

լիստները, այնքան աւելի են բազմացնում զարդարանքի համար աշխատող բանվորների թիւը: Կապիտալիստների դասակարգը հանում է օգտակար արդիւնաբերութեան ծոցից մի մեծ թիւ կին ու տղամարդ, որպէսզի սրանք իրեն ծառայեն, զարդացնեն, պաշտպանեն իւր սեփականութիւնը, յարատեւեն իւր հասարակական իշխանութիւնը և որպէսզի արտադրեն այն ամենը, ինչ որ ինքը վատնում է իւր յանցաւոր շուքի համար:

Բան. — Հասկանում եմ քեզ. ամեն մի կապիտալիստի անձնական պէտքերի համար աշխատում են մի հարիւր, գուցէ մի հազար, գուցէ և աւելի՝ բանվոր: Եթէ վերացնենք կապիտալիստ դասակարգը, կը վերադարձնենք արտադրութեան այդ մեծ անարդիւնաւէտ բանակը: Դօսք չը կայ, որ այդ դիպուածում, կարող կը լինէինք կարճացնել մեր աշխատանքի օրը կիսով չափ:

V.

ԳՈՂԵՐԸ

Ամբոխը. — Բռնեցէք գողը, բռնեցէք գողը:

Սոցիալիստ. — Ինչո՞ւ համար ես վազում թանչիդ տալով:

Բանվոր. — Գողը բռնելու համար:

Սոց. — Ի՞նչդ է գողացել նա:

Բան. — Ոչինչ, ինձանից բան չէ տարել։

Սոց. — Բայց ի՞նչ է գողացել։

Բան. — Ճիշտը չը գիտեմ, ասում են՝ տիրոջ դրամարկղը կոտրել է։

Սոց. — Վեղ վրդովում է այն հանգամանքը, որ գողութիւն են արել և ոստիկանի դեր ես կատարում՝ գողին բռնելու համար, առանց իմանալու մինչև անգամ գողացել է նա թէ ոչ։ Բայց եթէ կոտրիճ ես՝ ի՞նչու տիրոջդ չես բռնում։

Բան. — Նա հո չէ գողանում։

Սոց. — Աչքերդ լաւ սրբիր, սիրելիս։ Մեծ գողերը՝ նրանք, որ գողանում են ամէն օր — կապիտալիստներն են։

Բան. — Ուզում ես ինձ հաւատացնել թէ թանը մածնից չէ։

Սոց. — Բուրժուաները՝ իրենց Աստուածաբանութեամբ, Մարդու Իրաւունքներով և այլ խաբեբայութիւններով այնպէս են փակել աչքերդ որ չես էլ տեսնում, որ նրանք միայն գողութեամբ են ապրում և նրանց հարստութիւնը գողութեամբ է դիզուած։ Եթէ դու խելքով մտածէիր, կը հասկանայիր իսկոյն, որ ասածս այնպէս ճիշտ է, ինչպէս երկու անգամ երկու՝ չորս։

Բան. — Վեղ համար դա շատ պարզ է, իսկ ինձ համար — ոչ։

Սոց. — Դէ որ այդպէս է՝ լսիր ինձ. դու էլ կ'ասես, որ ես արդարացի եմ և կը համոզես, որ իսկապէս տէրերն ու կապիտալիստները գողեր են։

Բան. — Ինչ կը լինի որ. հէնց այդ եմ ուզում։ Ես չեմ սիրում տէրերին, բայց ինձ դուր չէ գալիս, որ սոցիալիստներն ասում են թէ՝ նրանք գող են, որովհետև նրանք մեզ պահպանում են։

Սոց. — Գլուխդ լեցրել են թէ սեփականութիւնն աշխատանքի պտուղ է և դու հաւատացել ես։

Բան. — Այո։

Սոց. — Ապա ուրեմն դու էլ պիտի լինես սեփականատէր, որովհետև աշխատում ես մանկութիւնից մինչև այսօր, իսկ այժմ դու արդէն 40 տարեկան ես։ Ո՞րն է քո ունեցած սեփականութիւնը։

Բան. — Սեփականութիւն չունեմ։ Ինչ որ տընտեսել էինք, ծախսեցինք խեղճ կնոջս վերջին ծընընդաբերութեան պատճառով։

Սոց. — Վիչ էր մեռցել որ մեռնի, չէ՞. ինչո՞ւ. — որովհետև մինչև երեխան բերելու օրը ընտրված էր աշխատել գործարանում։ Բուրժուաները լաւ են իմանում թէ ինչու համար են ասում՝ սեփականութիւնն աշխատանքի արդիւնք է, միայն լաւ կը լինէր, եթէ աւելացնէին թէ՝ մեր հասարակութեան մէջ սեփականութիւնը տրուած է միայն անգործ ու անպէտք մարդկանց։

Բան. — Այսքան տարի ապրում եմ, չը կարողացայ մի լաւ հասկանալ թէ ինչ՞ցն է, որ բանւորներն՝ ինձ նման՝ սու անդամ չ՚ունեն, մինչդեռ մեր տէրերը, կապիտալիստները, որոնք չեն աշխատում կամ արածնին էլ մի բան չէ, — հարուստ միլլիոնատէրեր են։

Սոց. — Դեղ հաւատացրել են, որ այդ աւելի մեծ հրաշք է, քան Սուրբ Կոյսի հրաշքը, որ փոքրիկ Յիսուսին ծնաւ՝ պառկելով աղաւնու հետ և որ Յիսուսն ունենալուց յետոյ անդամ մնաց կոյս, ինչպէս որ էր իւր կեանքի առաջին օրը։ Բայց այդտեղ հրաշք չը կայ, այլ միայն սահմանութիւն, կեղծիք, ծակ դատողութիւններ, որ սրիկաները հընարում են առանց դժւարութեան՝ երբ ուզում են։ Մի տես տեսնենք, իրչպէս է անում քո տէրը, որ կարողանում է հարստութիւն դիզել՝ առանց աշխատելու, հօ քեզնից ու ուրիշից աւելի լաւ չէ։

Բան. — Արիկայի մէջն է, նա իրեն հայրենասէր է ասում, բայց և այնպէս հիմնում է ֆիլատուրներ և ոստայնարաններ Լեհաստանում, որպէսզի մրցութիւն անէ Ռուսաստան մտնող ֆրանսիական ապրանքներին։

Սոց. — Ի՞նչ գործ ունես ապրանքների վաճառման հետ, նրանք քեզ չեն պատկանում, թէև դու ես պատրաստել։ Այդ յիմար են ինչ է նը-

բանք, որ քո տիրոջ մէջ ու պատգամաւոր են ընտրում, որը նրանց ամենասաստիկ մրցակիցն է թէ արդիւնագործութեան թէ վաճառականութեան մէջ։

Բան. — Յիմար չեն. սոցիալիստների ահից է, որ ընտրում են նրան։

Սոց. — Դու էլ լաւ գիտես, որ սիրոյ համար չէ, որ քո տէրն աշխատանք է տալիս լեհ բանւորներին։

Բան. — Ազգասիրութիւնից, հայրենասիրութիւնից էլ չէ ամենևին, որ նա սարիպում է մեզ 11, 12 ժամ աշխատել իւր բանտերում, ուր այնքա՜ն ընկերներ կորցրել են իրենց ձեռն ու ոտքը կամ մի այլ անդամը և նոյնիսկ իրենց կեանքը։

Սոց. — Այդ ի՞նչ է. ինչո՞ւ համար է նա աշխատեցնում ձեզ։

Բան. — Որովհետև նա փող է դիզում՝ մեզ աշխատեցնելով։

Սոց. — Ի՞նչպէս։

Բան. — Ոչինչ չը գիտեմ։ բայց իրողութիւնն այդ է և ասածոյ պատիժն էլ չէ կարող ըստիպել ինձ փոխել կարծիքս։

Սոց. — Չը գիտե՞ս. չը գիտես, որովհետև չես ուզում մտածել։ Դու ոստայնանկ ես։ Դնենք թէ օրը երեսուն մէտր կտաւ եղէն ես հիւսում և տէրդ վաճառում է այդ 15 ֆրանկի։ Կտաւի թելի համար նա տւել է 5 ֆրանկ, դաղի, շարժող ոյժի,

երկու ոստայնների մաշելու և ընդհանուր ծախսերի համար՝ 2 ֆրանկ. քեզ տալ է 3 ֆրանկ՝ օրավարձդ, — հաշիւը 10 ֆրանկ։ Ուրեմն մնում է 5 ֆրանկ արդիւնք։ Ո՞ւմ պէտք է տալի այդ արդիւնքը. քե՞զ թէ տիրոջդ։

Բան. — Ինձ՝ երկէ ինձ, տնաշէն։ Որովհետև ես եմ կտաւեղէն հիւսողը և ոչ թէ տէրս, որն օրնիբուն կամ սոցիալիստներին է հայհոյում կամ խմում շամպայն՝ մաքրազարդած սունկը մարսելու համար, մինչդեռ ես աշխատում եմ։

Սոց. — Հետևապէս, նա գողացել է 5 ֆրանկդ։

Բան. — Այնպէս հաշիւը թէ դրպանիցս է հանել։

Սոց. — Ուրեմն, դու էլ սոցիալիստների պէս ես մտածում, թէ տէրն աշխատանք է տալիս բանւորներին ոչ թէ նրա համար, որպէսզի օգնէ նրանց ապրուստ հայթհայթելու, այլ որպէսզի գողանայ նրանց աշխատանքի արդիւնքը։ Որքան աւելի բանւոր է աշխատեցնում տէրը, այնքան աւելի օգուտ է քաղում։ Այդ պատճառով իւր գողութիւնն աւելացնելու և աւելի շահաւէտ դարձնելու համար նա մեծացնում է իւր ֆաբրիկը և գնում է արտասահման ուրիշ ֆաբրիկներ հիմնելու։

Բան. — Ես հասկանում եմ տիրոջ գողութիւնը, բայց դրամատէրը, որ ոչ արհեստանոց ունի ոչ ֆաբրիկ, ի՞նչպէս է գողանում մեզնից։

Սոց. — Բանւորներից գողացածը տէրը չէ պահում միայն իւր համար. նա ստիպուած է զիջել դրա մի մասը քրէհի ձևով՝ անշարժ կայքերի սեփականատէրերին, մի ուրիշ մասը տոկոսի համար՝ դրամատէրերին և բանկիրներին, որոնք նրան դրամագլուխ են կանխում և զեղծում նրա արժէթղթերը. մի ուրիշ մասը տալիս է պետութեան, որն օգտւում է դրանից ժողովրդական պարտքի տոկոսները վճարելու, պարտք որ մի միլիարդից անց է։ Այս բարի աշխարհը՝ սեփականատէր, դրամատէր, բանկիր, հասոյթատէր (ռանտիէ), քիթ քթի տուած, խօսք մէկ են արել բաժանելու արդիւնագործական և երկրագործական տէրերի հետ այն ամենը, ինչ որ իրենք գողանում են ամեն օր քաղաքների և գիւղերի վարձկան բանւորներից։

Բան. — Ասածդ յիշեցնում է ինձ մի պատմութիւն աւազակների կեանքից, որ ես կարդացել եմ մի հին պատառուած գրքի մէջ։ Երբ նրանք ճամբորդների ունեցած չունեցածը խլում էին, կողոպուտը մարդագլուխ բաժանում էին, այնպէս որ ամեն մէկը ունենար իւր մասը, մինչև անգամ այն աւազակները, որոնք կողոպուտի պահուն բացակայ էին լինում։ Կապիտանն ստանում էր 3 մաս, իսկ իւր տեղապահները երկուական մաս. մի խօսքով, ամեն ինչ կանոնաւորած էին իրար մէջ։ Բայց եթէ

տէրերը, դրամատէրերը և պետութիւնը մի սիրա մի հոգի դառած՝ կողոպտում են վարձու աշխատանքը, ապա էլ ինչացո՞ւ է Արդարադատութիւնը։

Սոց. — Բանւորների համար՝ ոչինչ. նրանք օգուտ չունեն դրանից։ Դու կեանքումդ մի անգամ էլ լսած չը կաս, որ դատարանները դատապարտէին տէրերին, դրամատէրերին և պետութիւնը, որպէսզի սրանք վերադարձնէին բանւորներին այն, ինչ որ գողանում են աշխատանքից։ Ընդհակառակը դու ճանաչում ես շատ գործաթող բանւորներ, որոնց դատապարտել և բանտ են դրել, որովհետև պահանջել են աշխատավարձի չնչին աւելացում։

Բան. — Հեռու չը գնանք. ես ինքս երկու ամիս բանդ եմ նստել հինգ տարի սրանից առաջ գործադուլի պատճառով, որին ես էլ մասնակցում էի։ Արդարադատութիւնը ծառայում է միայն տէրերին և կապիտալիստներին։

Սոց. — Արդարադատութիւնը պահպանիչ դեր է կատարում բանւորներից գողացած հարստութիւնների վերաբերմամբ։ Յետոյ, քո ասած աւազակային խմբի նման՝ գողերի հասարակութիւնը կարող է յարատևել միայն այն դիպուածում, եթէ գոյութիւն ունեն օրէնքներ, որոնց դերն է՝ կանոնաւորել, կարգադրել գողացած բարիքների բաշխումը, որպէսզի ամենից ուժեղը կամ ամենից աւելի լերը չը վերցնէ

հոգով կամ մարմնով ամենից թոյլի մասը։ Արդարադատութեան ատեանները հաստատուած են ոչ միայն նրա համար, որ խանգարեն թշնամականներին կողոպտել բուրժուաներին, այլ և նրա համար, որ չը թոյլ տան բուրժուաներին՝ միմեանց կողոպտել։ Հենց այդպէս է եղել, որ կարիք է զգացուել հաստատելու վերահսկողներ ուտելիքների և խմելիքների վրայ, որպէսզի նրանք միմեանց չը թունաւորեն՝ իրենց կեղծած նիւթերով։

Բան. — Ասել է թէ թոյլ էին փչում, երբ վրդովուած բողոքում էին այնքան տիկին Լոմբերի միլլիոնների առիթով։ Եթէ փոխանակ կապիտալիստներից գողանալու, նա գողացած լինէր բանւորների ու գիւղացիների աշխատանքի արդիւնքից, նրան թոյլ կը տային հանգիստ մաքրագարդել միլլիոնները, որոնք այդ դիպուածում պիտի կոչէին պատուաւոր կերպով ձեռք բերուած հարստութիւն։

Սոց. — Շքանշաններ կը տային նրան, կը կոչէին սուրբ, մարդկութեան բարերար։ Դու տիրոջ հօ շքանշան են տալ։ Սրան համարում են կապիտալիստական բարեմասնութիւնների մարմնացած օրինակ, ինչո՞ւ։ Որովհետև իւր շնական կեանքի ընթացքում կողոպտել է երեսուն հազարի չափ բանւորներ՝ Ֆրանսիայում և Լէհաստանում։ Կապիտալիստները բարձր և սաստիկ վրդովմունք են

յայտնում իրենցից գողացող գողերի դէմ, որպէսզի հաւատացնեն միամիտ մարդկանց (ինչպէս որ դու էիր) թէ իրենք գողութիւնն աւելի են ատում քան ոև է ուրիշ վատ բան, և որպէսզի հաւատացնեն այդպիսով թէ իրենց ունեցած հարստութիւնն իրենց աշխատանքի արդիւնքն է։

Բան. — Եթանք ճիշտ այն են անում, ինչ որ այն գողը, որ մի գլուխ գոռում էր. բռնեցէք գողը, բռնեցէ՛ք, — որպէսզի իւր գլխից ուադ անէ իրեն փնտռողներին։

Սոց. — Ե՞րբ պիտի լինի վերջապէս որ աշխատաւորները, որ այնքան ջանքով և եռանդով վազում են՝ բուրժուաներից գողացող խեղճ գողերին բռնելու համար. ե՞րբ պիտի լինի, կրկնում եմ, որ բանւորները խելքի գան և վազեն՝ իրենց կողոպտող կապիտալիստներին բռնելու համար։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՈ-Արմ ССР
Ա. ԿԻ Ա. Մասիսեան
ՄԵՍՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ

2013
<< Ազգային գրադարան
1918
NL0034663